

Ազգանուն, անուն-----

Դպրոց, դասարան-----

**ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՃԵՄԱՐԱՆ
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ**

2015-2016 ուստարի, հունիս

5-6-րդ դասարան

Մայրենի

1. Լրացնել բաց թողնված տառերը: (6, -1)

Նր—ագեղ կարապը դյուրաթեք պարանոցը մեղմ—րեն խոնարհեց ջրի ողորկ հա—ելու վրա: Նա անքթիթ գ—եց ինքն իրեն: Նայեց ու հասկացավ իր մարմնով անցնող սա—սու—ի պատճառը: Ժամը հասել է. Պետք է հրաժեշտ տա կյանքին:

Կարապն ան—րկյուղ սահեց դեպի լացող ուռին, որի ստվերախիտ հովանու տակ սիրում էր եր—եմն հանգստանալ:

Երեկոն իջավ և հեք—աթային մայրամուտը լճի ջրերը ներկեց կարմիրով: Վերջալույսի խոր անդո—ի մեջ բարձր թևածեց կարապի երգը: Նա ո—եշնչված երգում էր ծա—կազարդ բնության, երկնքի, ջրի և հողի հանդեպ տաճած իր սիրո մասին:

Քա—ցրահնչուն և թախճանուշ երգը դեռ երկար լսվում էր շրջակայքում և մարեց միայն արևի վերջին շողերի հետ:

2. Գրել մեկական հոմանիշ տրված բառերին: (2, -0,5)

Դյուրաթեք-----

Անքթիթ-----

Գեղանի-----

Վերջալույս-----

3. Գրել մեկական հականիշ տրված բառերին: (2, -0,5)

Մարել-----

Սիրել-----

Խրճիթ-----

Մայրամուտ-----

